Քեչիշ-Քենդ—Գորիս գիծը։ Մի խումբ հայ դրամատէրեր ծրագրում էին Վեդի-Բասարի շրջանում հիմնել ցեմենտի և կրի գործարաններ։ Մէկ ուրիշը՝ ատաղձի, շէնքի փայտեղէն մասերի գործարան Սարըղամիշում։

Ցունիսի վերջերին մի խումբ հայ և օտար դրամատէրերի կողմից Երևան եկաւ ինժ. Կ. Ս. Արղութեան-Երկայնաբազուկը՝ խնդրելու համար Բաթում—Կարս—Սարդարապատ երկաթուղի անցկացնելու իրաւունքը։ Հայերից յիշեալ խմբի մէջ մտնում էին Ռոստով-Նախիջևանցի ու Մոսկովցի յայտնի հայ դրամատէր Ժամհարեանը, Կայեալեանը, Քիստեանը, Խըրմաճեանը և ուրիշներ։

Արղութեանի ներկայացրած պայմանագրի էութիւնը հետևեալն էր.— Ընկերութիւնը, սեփական միջոցներով, առանց կառավարական նպաստի, պէտք է կառուցանէր երկաթուղի, որը պիտի սկսէր Բաթումից կամ Հայաստանին տրուելիք որև է նաւահանգստից, անցնելու էր Ճորոխի ձախ ափով, ապա՝ Օլթի գետի հովտով, Փենեակ գետի հովտով, Օլթիի ածխահանքերի մօտով, կտրելու էր Կարս—Սարըղամիշ երկաթուղին Սելիմ կայարանի մօտ և անցնելով Զարարխանա ոսկեհանքերի ու Զրոնեխի հանքերի և Կաղզուանի ու Կողբի աղահանքերի մօտով՝ միանալու էր Ալեքսանդրապոլ—Երևան երկաթուղաձին, մօտաւորապէս Սարդարապատ կայարանում։

Այսպիսով, բացուելու էր նոր ճանապարհ Սև ծովից դէպի Թաւրիզ, Երևանի վրայով, որը շուրջ 250 վերստով լինելու էր աւելի կարճ, քան Բաթում—Թիֆլիս—Ջուլֆա—Թաւրիզ երկաթուղին։ Տնտեսական տեսակէտից ճանապարհը պիտի ունենար ահագին նշանակութիւն. պարսկա-եւրոպական թրանզիտը ամբողջապէս Վրաստանից պիտի անցնէր Հայաստանին։

Ներկայացուած պայմանագրի համաձայն պէտք է երկու տարի ժամանակամիջոց տրուէր հետախուզական աշխատանքների և երկաթուղաձի ու էլեկտրակայանների նախագծեր պատրաստելու համար։ Այլ, չորս տարուայ ընթացքում, պէտք է շինուէր ու շարժման մէջ դրուէր երկաթուղին իր ամբողջ սարքով։ Շարժիչ ոյժ ստանալու համար պէտք է օգտագործուէին Ճորոխ, Արաքս, Ախուրեան և Հրազդան գետերը, որոնցից ստացուելիք էլեկտրականութիւնը, երկաթուղուց զատ, պէտք է բաշխուէր ուրիշ նպատակների համար էլ։

Պայմանագրի նախագծի համաձայն երկաթուղու ամբողջ հասոյթի 10%ը պէտք է տրուէր պետութեան, ինչպէս նաև էլեկտրակայանների 15%ը։ Էլեկտրական ոյժը վաճառուելու էր կիլոուատ-ժամը 4 ոսկի կոպէկով, իսկ արդիւնաբերական, գիւղատնտեսական և այլ տեխնիկական կարիքների համար՝ 3կ.։ Պայմանագիրը կնքուելու էր 55 տարով։ 30 տարի անցնելուց յետոյ կառավարութիւնը իրաւունք պիտի ունենար գնելու ամբողջ ձեռնարկութիւնը՝ երկաթուղին ու էլեկտրակայանները։ Այդ պարագային, կառավարութիւնը պէտք է վճարէր մնացած տարիներին կոնցեսիոներների ստանալիք օգուտի միջինը։ Պայմանագիրը ստորագրելիս ընկերութիւնը